Վարուժան Ավետիքյան

«Զինծառայողների ապահովագրության» հիմնադրամի նախկին տնօրեն

Երևան 2021

Կենսագրություն

Աշխատանքային գործունեություն

1998 - 2000 թթ. ՀՀ կենտրոնական բանկի իրավաբանական վարչության օրենսդրության զարգացման բաժնի առաջատար մասնագետ

2000թ. – առայսօր Հայաստանում Ֆրանսիական համալսարանի ձեռնարկատիրական և ֆինանսավարկային իրավունքի դասախոս

2000– 2003 թթ. ՀՀ կենտրոնական բանկի իրավաբանական վարչության օրենսդրության զարգացման բաժնի պետ

2003-2006 թթ. Տնտեսական քաղաքականության և իրավական խորհրդատվության հայ-եվրոպական կենտրոնի իրավական թիմի ղեկավար

2006 - 2018 թթ. ՀՀ կենտրոնական բանկի իրավաբանական վարչության պետ

2018թ. «ԹԻՔԵՅ ԸՆԴ ՓԱՐԹՆԵՐՍ» ՓԲ ընկերության կառավարող գործընկեր

2017- 2021թթ «Զինծառայողների ապահովագրության» հիմնադրամի տնօրեն

Զինծառայողների ապահովագրության հիմնադրամի նախկին տնօրեն Վարուժան Ավետիքյանը ԱԶԳ օրաթերթի խմբագիր Հակոբ Ավետիքյանի որդին է: Նա ռեժիմի օրոք գլխավորում էր Կենտրոնական Բանկի իրավաբանական վարչությունը և լծվել է Հայաստանի Հանրապետության բյուջեյից միլիոնավոր դոլարներ բռնագանձելու փորձ իրականացնողներին օգնելու գործին: Հիմա առավել մանրամասն:

Վարուժան Ավետիքյանը, հանդիսանալով Կենտրոնական Բանկի (ԿԲ) իրավաբանական գլխավոր վաչության պետը, հեղինակել է թիվ 8 պարզաբանումը, որով փոխել է Բանկերի և բանկային գործունեության մասին օրենքի իմպերատիվ արգելքը և թույլատրել է բանկերի խոշոր բաժնետերերին օրենքի կոպիտ խախտմամբ ազատվել բանկերի փոքր բաժնետերերից:

Արդյունքում, ԿԲ թողտվությամբ բանկերի փոքր բաժնետերերի ունեզրկումը հանգեցնում է նրան, որ Հայաստանի բանկային բաժնետիրացման ոլորտը շուրջ տաս տարի չի կայանում և չի կարող կայանալ: Ավելին, փոքր և խոշոր բաժնետերերի միջև Վարուժան Ավետիքյանի տված պարզաբանման արդյունքում ծագած վեճով արդեն իսկ ՄԻԵԴ-ը վեճ է կոմունիկացրել ՀՀ կառավարությանը:[1]

Մասնավորապես, կրեմլամերձ ֆինանսիստ Ռուբեն Վարդանյանին պատկանող հայկական Ամերիաբանկը 2012 թվականի որոշում է ազատվել փոքր բաժնետերերից, ներառյալ և հատկապես՝ Արտաշես Հովհաննիսյանից, քանի որ վերջինս փոքր բաժնետերերից ամենա մեծն էր: Այդ նպատակով Բանկը որոշում է իրականացնել բաժնետոմսերի կոնսոլիդացիա և դա անել այնպես, որ փոքր բաժնետերերի բաժնետոմսերը դառնան կոտորակային և Բանկը դրանք պարտադիր կերպով փոքր բաժնետերերից հետ գնի: Նշվածն իրականացնելիս Բանկը հանդիպելով <<Բանկերի և Բանկային գործունեության մասին>> ՀՀ օրենքի 37-րդ հոդվածով սահմանված արգելքին՝ փորձում է ՀՀ կենտրոնական բանկի հետ համագործակցելով շրջանցել այդ արգելքը: Նշված նորմը արգելում է Բանկին հետ գնել բաժնետոմսեր, ինչպես նաև իրականացնել բաժնետոմսերի այնպիսի կոնսոլիդացիա, որը կառաջացնի բաժնետոմսերի հետգնում:

Այդ նպատակով Բանկը դիմում է ՀՀ կենտրոնական բանկ նշված արգելքի վերաբերյալ պարզաբանում ստանալու համար:

---

[1] http://hudoc.echr.coe.int/eng?i=001-210427

ԿԲ-ի այդ ժամանակվա իրավաբանական վարչության պետ Վարուժան Ավետիքյանի մտատանջումների և Բանկի ղեկավարության հետ ապօրինի համագործակցության արդյունքում ՀՀ կենտրոնական բանկի խորհրդը 24.07.2012թ. տալիս է թիվ 8 պաշտոնական պարզաբանումը, որը ի թիվս այլնի հղում անելով նաև ԱՄՆ Դելավեր նահանգի կորպորատիվ հարաբերությունները կարգավորող օրենսդրությանը, ըստ էության, վերացնում է օրենքով սահմանված հիշյալ արգելքը:

Նշված խնդրով Արտաշես Հովհաննիսյանը դիմում է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան և ՀՀ վարչական դատարան:

ՀՀ դատարաններում վերջնարդյունքում ԿԲ-ի ձեռնարկած անօրինական գործողությունների շնորհիվ Արտաշես Հովհաննիսյանի պահանջները մերժվում են:

Այս ընթացքում, սակայն, ՀՀ վարչական դատարանը Արտաշես Հովհաննիսյանի պահանջը բավարարում է, որ հետագայում վերադաս դատարաններն ապօրինաբար մերժում են: Ընդ որում, ՀՀ վճռաբեկ դատարանի կողմից որոշում կայացնելիս չորս դատավոր հօգուտ Արտաշես Հովհաննիսյանի տալիս է հատուկ կարծիք:

ՀՀ-ում պարտվելուց հետո Արտաշես Հովհաննիսյանը դիմում է Մարդու իրավունքների պաշտպանության Եվրոպական դատարան:

Վերջերս Եվրոպական դատարանը Արտաշես Հովհաննիսյանի դիմումն ընդունել է քննության, որը նշանակում է, որ շուտով մենք հերթական անգան կունենանք ՀՀ-ի դեմ Եվրոպական դատարանի վճիռ, որով ՀՀ քաղաքացիների վճարած հարկերից մեծ գումարներ կվճարվեն Վարուժան Ավետիքյանի "գործունեության" արդյունքում տրված ապօրինի պարզբանման հետևանքով:

Ավելին, Վարուժան Ավետիքյանը, հանդիսանալով Զինվորների ապահովագրության հիմնադրամի տնօրենը, փաստաբանական ծառայություններ է մատուցել ՀՀ դեմ միջազգային ներդրումային արբիտրաժում հանդես եկող անձանց: Հաշվի առնելով, որ Հիմնադրամն ունի քվազի - պետական կարգավիճակ, քանզի օրենքի ուժով դրա հաշվին ՀՀ աշխատող քաղաքացիները փոխանցում պարտադիր վճարներ, կարելի է փաստել, որ պարոն Ավետիքյանը, մի կողմից կատարելով քվազի - պետական պաշտոնյայի գործառույթներ, այն է՝ հավաքագրելով և ծախսելով պարտադիր վճարներ սոցիալական աջակցության ոլորտում, մյուս կողմից ՀՀ շահերի դեմ գործունեություն է իրականացրել, ինչը առնվազն փաստաբանական էթիկայի և շահերի բախման առումով լուրջ մտահոգություններ է առաջացրել փաստաբանական և փորձագիտական շրջանակներում:

Զինծառայողների ապահովագրության հիմնադրամ

2012թթ., անհայտ ծագումնաբանությամբ մի անձ՝ Ջո Բորկովսկին և Դուբայում գրանցված նրա «Rassia FZE» ընկերությունը, տխրահռչակ Միքայել Մինասյանի օժանդակությամբ, ՀՀ կառավարության հետ կնքում են Հայաստանի Հարավի Արագընթաց Ճանապարհի Կոնցեսիայի Հանձայնագիր: Այդ պայմանագրով, առանց որևէ մրցույթի, մի մասնավոր անձի ձեռք են անցնում Հայաստանի համար ռազմավարական նշանակություն ունեցող Սյունիքի մարզում նախատեսվող, Հայաստանը Իրանի հետ կապող ավտոմայրուղու և երկաթգծի կառուցման և կառավարման մենաշնորհային իրավունքներ:

Բորկովսկին, քաջ գնահատելով կառավարության անկազմակերպ վարքագիծը, որոշում է պետական գանձարանը դատարկելու փորձ կատարել: Այս գործին նա նետում է մեծ ուժեր, ի դեմս «Queen Emanuel» միջազգային հեղինակավոր փաստաբանական ընկերության: Ինչպես նախկինում գրել էինք, 2018թ օգոստոսին, Բորկովսկին և նրա ընկերությունը Հայաստանի Հանրապետության դեմ հայց են ներկայացրել Միջազգային ներդրումային արբիտրաժային դատարան[2] :

Հայաստանի բյուջեյից Բորկովսկին և նրա ընկերությունը պահանջում են շուրջ $300 000 000 դոլար: Վերջիններս պնդում են, որ Հայաստանը խախտել է իրենց միջև կնքված Կոնցեսիոն պայմանագիրը:

Համեմատության համար նշենք, որ այս պահի դրությամբ ամբողջ հայության ջանքերով Համահայկական հիմնադրամում հավաքել է շուրջ $170 592 000:

Ի՞նչ կապ ունի Վարուժան Ավետիքյանն այս ամենի հետ: Պարզվում է, որ Կոնցեսիոն պայմանագիրը կառավարվում է հայկական իրավունքով և Բորկովսկու տեղական, հայկական փաստաբանը հենց Վարուժան Ավետիքյանն է, ով փաստորեն օգնում, հուշում է պարոն Բորկովսկուն, թե ինչպես վերջինս կարող է հաջողել և Հայաստանի բյուջեյից բռնագանձել շուրջ $300 000 000:

Այսինքն աջ ձեռքով, Զինծառայողների ապահովագրության հիմնադրամի տնօրեն Վարուժան Ավետիքյանը զբաղված է հայրենասիրական բոցաշունչ ստատուսներ գրելով [3], ներկայանում է որպես մարդ, ով ուզում է «գոռա, քրֆի, լացի կամ առնվազն իր պրոֆիլի նկարը փոխի ու դնի 4750», ում «կյանքի նպատակն է» «…գտնել 1 միլիոն հայի, ով

---

[2] https://icsid.worldbank.org/cases/case-database/case-detail?CaseNo=ARB/18/28

[3] https://www.facebook.com/photo.php?fbid=10157970580188693&set=a.57637948692&type=3

ամսական առնվազն 25,000 դրամ, 50 դոլար կամ եվրո կփոխանցեն Զինծառայողների ապահովագրության հիմնադրամին», իսկ ձախ ձեռքով նա օգնում է ոմն օտար արկածախնդրի՝ Հայաստանի բյուջեն շուրջ $300 000 000 դոլարով պակասեցնելու գործում:

Միշտ էլ կարելի է ասել, թե մարդն իր գործ է անում, փաստաբանությունը, դա մասնագիտական գործունեություն է: Հայաստանի բյուջեյից, և այսինքն մեր երեխաների, զինվորի ու նրա ծնողների, մեր բանակի, հաշմանդամի և թոշակառուի գրպանից շուրջ $300 000 000 պահանջողին օգնում է ոչ ավել, ոչ պակաս քան Զինծառայողների ապահովագրության հիմնադրամի տնօրենը, ով աջ ու ձախ բղավում է այն մասին, որ իր կյանքի նպատակը ազգօգուտ ծրագրերի համար գումարներ հավաքագրելն է: